Հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր

հ.գ.դ., պրոֆեսոր Ա. Լոքյան

«16.12.2020»

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՄԱՅԱԿ ՎԱՀԱՆԻ

ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ (ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ)

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հմայակ Վահանի Մանուկյանի՝ «Հաշտարարի գործունեության արդյունավետությունը պայմանավորող անձնային և սոցիալ-հոգեբանական գործոնները (քաղաքացիաիրավական վեճերի լուծման համատեքստում)» խորագրով ատենախոսությունը քննարկվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնի նիստում (11.12.2020): Ամբիոնի նիստին

մասնակցում էին հ.գ.թ. պրոֆեսոր Ռ.Վ. Աղուզումցյանը, հ.գ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Բ. Լոքյանը, հ.գ. դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ. Ավանեսյանը, հ.գ.թ. դոցենտ Լ.Հ. Պետրոսյանը, հ.գ.թ. դոցենտ Գ.Ս. Հարությունյանը, հ.գ.թ. դոցենտ Ս.Հ. Պողոսյանը և հ.գ.թ. Ս. Խ. Բեգիրջյանը:

Ատենախոսությունը նվիրված է արդիական և ՀՀ-ում քիչ ուսումնասիրված հիմնահարցի, այն է՝ հաշտարարի գործունեության արդյունավետությունը պայմանավորող անձնային և սոցիալ-հոգեբանական գործոններին: Ներկայիս գիտության, տեխնիկայի զարգացումը պարտադրում է որքան հնարավոր է կոնֆլիկտները լուծել առավել կոնստրուկտիվ տարբերակով՝ ընդգրկելով կոնֆլիկտող կողմերին: Ելնելով վերոնշյալից՝ հասարակական կյանք է ներմուծվել հաշտարարի ինստիտուտը, որը, ըստ ներկայիս ձևաչափի, իրավաբանական մասնագիտություն է, սակայն գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է նաև անձնային և սոցիալ-հոգեբանական գործոններով: Մասնագետից պահանջվում են հոգեբանական գիտելիքների, կարողությունների և հմտությունների որոշակի ռեսուրսներ: Հիմնահարցի արդիականությունը պայմանավորված է մի կողմից Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ներկայիս փուլում հաշտարարության համակարգի կայացման կարևորությունը, մյուս կողմից՝ այդ ինստիտուտի վերաբերյալ համապարփակ ուսումնասիրությունների բացակայությամբ, մյուս կողմից հաշտարարության ինստիտուտի՝ որպես կառույցի, հաշտարարության՝ որպես գործընթացի, և հաշտարարների՝ որպես այդ գործընթացն իրականացնող անձանց, հոգեբանական և մասնագիտական առանձնահատկությունների ուսումնասիրությունների անհրաժեշտությամբ:

Ժամանակակից հաշտարարության ինստիտուտի, դրա կառուցվածքային և գործառական տարրերի, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների տեսական-էմպիրիկ հետազոտումը հնարավորություն է ընձեռում հստակեցնելու, շտկելու և կարգավորելու հայկական իրականության մեջ հաշտարարության անցկացման առկա մոտեցումները: Քաղաքացիաիրավական վեճերի հանգուցալուծման, հաշտարարության, որպես տարաբնույթ կոնֆլիկտների հանգուցալուծման համընդհանուր միջոցի տեխնիկաների, փուլերի և տեսակների

վերլուծությունը հնարավորություն է ընձեռում լրացնելու կոնֆլիկտաբանության մեթոդաբանությունն ու գիտակիրառական գիտելիքները:

Ելնելով վերոգրյալից՝ ատենախոսը նպատակ է դրել իր առջև ուսումնասիրել այն անձնային և սոցիալ-հոգեբանական գործոնները, որոնք պայմանավորում են հաշտարարի արդյունավետ գործունեությունը:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից՝ երկու տեսական և մեկ փորձարարական, եզրակացություններից, գործնական առաջարկներից, համապատասխան մասնագիտական գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ուսումնասիրվածության աստիճանը, առաջադրված են հետազոտության գիտական վարկածները, սահմանված են հիմնական նպատակը, խնդիրները և ուսումնասիրության մեթոդները: Ներկայացված են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, տեսակիրառական նշանակությունը, գիտական նորույթը, պաշտանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Կոնֆլիկտների առաջացման կառուցակարգերի և դրանց լուծման տեխնոլոգիաների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների տեսական վերլուծություն» խորագրով գլխում ներկայացված են «Կոնֆլիկտի հիմնախնդրի հայեցակարգային մոտեցումների վերլուծություն», «Կոնֆլիկտների հանգուցալուծման ռազմավարությունների և մարտավարությունների կիրառման առանձնահատկությունները», «Հաշտարարությունը (Մեդիացիան) որպես կոնֆլիկտների հանգուցալուծման այլընտրանքային ձևաչափ», «Հաշտարարության ինստիտուտի կայացումը և ժամանակակից կարգավիճակը ՀՀ-ում» ենթագլուխները: Սույն գլխում անդրադարձ է կատարվել «կոնֆլիկտ» երևույթի էության ամենատարբեր մեկնաբանություններին, կոնֆլիկտների քանակական և որակական վերափոխումներին, վերլուծվել են տվյալ հիմնախնդրի հայեցակարգային հիմքերն ու մոտեցումները, ուսումնասիրվել են կոնֆլիկտների հետևանքները, առաջացման կառուցակարգերն ու գործառույթները: Վեր են հանվել կոնֆլիկտի՝ իբրև բազմամակարդակ և բազմաբնույթ սոցիալ-

հոգեբանական երևույթի տարբեր գործոններն ու իրավիճակները և դրանց հանգուցալուծման համալիր մոտեցումը: Կոնֆլիկտները, իրականացնելով ֆունկցիոնալ, դիսֆունկցիոնալ և ճանաչողական գործառույթ, հանդիսանում են ժամանակակից հասարակության անխուսափելի բաղադրիչը, որը պահանջում է մասնագիտական մոտեցում: Հետևաբար կոնֆլիկտների հանգուցալուծման ժամանակակից տեխնոլոգիաների մեջ հարկ է առանձնացնել հաշտարարության ինստիտուտը, որի իրավական, տնտեսական, հոգեբանական առավելությունները կասկած չեն հարուցում: Առանձնահատուկ կարևորվում է հաշտարարությունը, որը կարելի է դիտարկել և՛ որպես մոտեցում, և՛ որպես գործընթաց. առաջինն ունի իմաստաբանական, իսկ երկրորդը կիրառական նշանակություն: Մասնավորապես, այն դեպքերում, երբ վեճերն ու կոնֆլիկտներն ունեն միակողմանի բնույթ, օրինակ, առևտրի կամ ծառայության սպառողն ունի օբյեկտիվ պահանջներ, միջնորդության գործոնը կարող է ունենալ զսպող գործառույթ: Այս գործառույթի իրականացման համար սպառողները և այն կազմակերպությունները, որոնք ապահովում են զանազան տեսակի ծառայություններ՝ դատական գործընթացից խուսափելու համար, կարող են դիմել հաշտարարի միջնորդության: Վերջին տարիներին փորձեր արվեցին կայացնելու և զարգացնելու վերոնշյալ ինստիտուտը, սակայն որպես այդպիսին հաշտարարության ինստիտուտը ՀՀ-ում դեռ չի կարելի համարել կայացած: Ատենախոսության առաջին գլխում իրականացված վերլուծության ընդհանրացման հիման վրա կազմվել է ՀՀ հաշտարարության ինստիտուտի բաղադրիչների գործառական գծապատկերը:

Ատենախոսության **երկրորդ՝** «Հաշտարարի գործունեության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները քաղաքացիաիրավական հարաբերությունների համատեքստում» խորագրով գլխում տեսական վերլուծության են ենթարկվել հաշտարարի անձնային և մասնագիտական որակները, հաշտարարության գործունեությունը, ինչպես նաև վերջինիս դերն ու հնարավոր հետևանքները: Սույն գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից՝ «Հաշտարարների գործունեության սոցիալ-հոգեբանական տեսակետների վերլուծություն» և Հաշտարարաների (Մեդիատոների) մասնագիտական կարևոր հատկությունների գնահատման, զարգացման և կարգավորման յուրահատկությունները», վերջինիս

դիտարկված հետազոտությունների հիման վրա կատարվել է եզրակացություն այն մասին, որ հաշտարարի գործունեության արդյունավետությունը պայմանավորված է մի կողմից, իրավիճակային փոփոխականների վերլուծության և համադրության ունակություններով՝ կոնֆլիկտների լուծման միջոցներն ու նպատակները սահմանելու համար, մյուս կողմից, հակամարտող կողմերի հետ աշխատանքի ռազմավարության և մարտավարության ընտրությունով: Տեսական վերլուծության արդյունքների ամփոփման հիման վրա կազմվել է գծապատկեր, որը ներկայացնում է որակյալ հաշտարարների պատրաստման համար կրթական համակարգի բացերը լրացնելու ուղիները: Ատենախոսության **երրորդ** գլխի՝ «Հաշտարարի գործունեության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների փորձարարական հետազոտություն» խորագրի «Հետազոտության կազմակերպման փուլերը և ընտրանքը» ենթագլխում ներկայացված են հետազոտության իրականացման փուլերը, ընթացքը, հետազոտական խնդիրներն ու բաղադրիչները, ինչպես նաև հետազոտական տարբեր փուլերում ներգրավված համակազմի քանակական ցուցանիշները: «Հետազոտության մեթոդների հիմնավորումը և մեթոդիկաների նկարագրությունը» ենթագլխում հանգամանորեն ներկայացված են փորձարարական հետազոտության համար ընտրված և կիրառված որակական ու քանակական վերլուծության, փորձագիտական հարցման, կոնտենտ վերլուծության, սոցիալ-հոգեբանական գիտափորձի, թեստավորման, հացաթերթիկային հարցման, մաթեմատիկական վիճակագրության մեթոդները, ինչպես նաև թեստավորման շրջանակում օգտագործված մեթոդիկաների էությունն ու անցկացման ընթացակարգը:

«Հետազոտության արդյունքները և դրանց վերլուծությունը» վերտառությամբ ենթագլխում առանձնաբար ներկայացված են հետազոտության իրար հաջորդող փուլերում ստացված տվյալներն ու դրանց մեկնաբանությունը: Ատենախոսության **3.3.1**. «ՀՀ-ում հաշտարարության ինստիտուտի կայացման և հասարակության իրազեկվածության վերլուծությունը» բաժնում ներկայացված է կատարված կոնտենտ վերլուծությունը, որն իրականացվել է երկու փուլով: Իրականացված հարցման և սոցիալ-հոգեբանական գիտափորձի արդյունքների վերլուծության արդյունքում ատենախոսը եզրակացրել է ՀՀ-ում հաշտարարության ինստիտուտի վերաբերյալ իրազեկման աշխատանքների ցածր մակարդակի մասին, և, միևնույն ժամանակ, դրա

նկատմամբ վստահության և դիմելու հավանականության բարձրացման գործում իրազեկման աշխատանքների կարևորության մասին: Հաշտարարի մասնագիտական կարևոր հատկությունների ուսումնասիրում» բաժնում անդրադարձ է կատարվել հաշտարարների գործունեության արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ մասնագիտական կոմպետենցիաներին: ՀՀ-ում հաշտարարների մասնագիտական կարևոր հատկությունների ուսումնասիրման, և, որպես հետևանք, հաշտարարի հոգեբանական դիմանկարի կազմման նպատակով ատենախոսը իրականացված փորձագիտական հարցման հիման վրա կատարել է նաև հատկությունների և ունակությունների ռանգավորում: «Հաշտարարների մասնագիտական կարևոր հատկությունների համեմատական վերլուծություն» բաժնում ներկայացված են հաշտարարների մասնագիտական կարևոր հատկությունների առանձին թեստերի արդյունքներն ու ստացված ցուցանիշների համեմատական վերլուծությունը: Հետազոտությունը կատարվել է 2 խմբերի հետ՝ առաջին խմբում ներառվել են 1-5 տարի աշխատանքային փորձ ունեցող հետազոտվողները, իսկ երկրորդում՝ 6 և ավելի տարի աշխատանքային փորձ ունեցող հետազոտվողները: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ երկու խմբերում էլ բարձր արտահայտվածություն ունի որոշման կայացման «զգոնություն» ռազմավարությունը: Ատենախոսը եզրակացրել է, որ հաշտարարի գործունեության արդյունավետության համար, մի կողմից կարևորվում են գործունեական, գործընթացային պայմանները, մյուս կողմից անձնային և մասնագիտական առանձնահատկությունները, որոնք հնարավոր է զարգացնել համապատասխան ներգործության արդյունքում: Միևնույն ժամանակ երկրորդ խմբի հետազոտվողների մոտ գրանցվել է անտիցիպացիոն ունակությունների բոլոր բաղադրիչների ցուցանիշների աճ: Սակայն հավաստի և էական փոփոխությունների ենթարկվել է անձնային-իրավիճակային անտիցիպացիոն կարողությունը, ինչը մատնանշում է տվյալ բաղադրիչի էական դերակատարությունը հաշտարարական գործունեության մեջ: Անտիցիպացիոն ունակությունների ինտեգրալ ցուցանիշը ևս ենթարկվում է հավաստի փոփոխությունների ($p<0,01$) և հասնում կանխատեսման հատկությունների բարձր մակարդակին:

Փորձարարական հետազոտությունն իրականացվել է գիտահետազոտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին համապատասխան: Ստացված արդյունքների հիման վրա ատենախոսը հանգել է եզրակացությունների: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի 8 հրատարակումներում:

Ատենախոսության ուսումնասիրման արդյունքում ի հայտ եկան մի քանի խնդրահարույց հարցեր և նկատառումներ, որոնք պարզաբանման կարիք ունեն՝

1. Ատենախոսության սկզբում հղում անելով արևմտյան, ռուսաստանի և հայ հեղինակների աշխատանքներին՝ ատենախոսը 14 էջ հիմնավորում է ընտրված թեմայի արդիականությունը և հետազոտվածության աստիճանը: Հարց է առաջանում՝ նշված հարցերին ներածությունում այդ ծավալով անդրադառնալու անհրաժեշտության մասին, քանի որ ատենախոսության առաջին և երկրորդ գլխուներում մանրամասն համապատասխանաբար վերլուծված են՝ հաշտարարությունը որպես կոնֆլիկտների հանգուցալուծման այլընտրանքային ձևաչափը և հաշտարարի քաղաքացիաիրավական հարաբերությունների համատեքստում գործունեության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները:

2. Ատենախոսությունում առաջադրված է երկու վարկած, որոնց ապացուցումը հետազոտական ռազմավարության միջոցով տարանջատում երկու բաժինների և նմանատիպ ձևով արտացոլվում է պաշտպանության դրույթների ձևակերպումներում: Արդյոք ավելի նպատակահարմար և ամբողջական չէր լինի, եթե հեղինակը վարկածները միավորեր և «սոցիալական ընկալման» գործառույթը ներառեր քաղաքացիաիրավական ոլորտներում առաջացած վեճերի լուծման հաշտարարի գործիքակազմի բարելավման հավելյալ գործոնի մեջ:

3. Հեղինակը ինչպես տեսական, այնպես էլ աշխատանքի փորձարարական մասում հատուկ ուշադրություն է դարձնում կոնֆլիկտների հանգուցալուծման և քաղաքացիաիրավական վեճերի հաշտեցման գործընթացը իրանակացնող անձի հոգեբանական առանձնահատկություններին (ատենախոսության 2.2, 1.2, 3.3.2 և 3.3.3 ենթաբաժիններեր)՝ կիրառելով հաղորդակցական և կազմակերպչական

ընդունակությունների, որոշման կայացման, անձնային տիպաբանության (ըստ Մ. Բրիգսի) և անտիցիպացիոն ունակությունները գնահատող համապատասխան թեստերը: Ըստ մեզ՝ անձի մասնագիտական պիտանելիությունը գնահատելու համար կարելի էր ուշադրություն դարձնել նաև հաշտարարի խառնվածքի առանձնահատկություններին և օգտագործել ժամանակակից և ինֆորմատիվ «Մեծ հնգյակ» թեստը:

4. Ատենախոսությունը հագեցված է ներկայացուցչական նյութով՝ գծապատկերներով, աղյուսակներով, նկարներով, որոնց բովանդակությունը ու արդյունքները հիմնականում մանրամասն նկարագրված և վերլուծված են: Սակայն 1 և 2-րդ գլուխների վերջում՝ 46 և 66 էջերում, ներկայացված գծապատկերների բացատրությունը բացակայում է:

5. Որոշ աղյուսակներում (նկար 5 էջ 92-ում, նկար 6 էջ 94-ում, աղյուսակ 3 էջ 96-ում) նկատվում են թվային արժեքների ոչ միանշանակ ներկայացման ձև՝ կապված ցուցանիշների կամ միավորների համեմատության հետ:

6.Ցանկալի կլիներ, որ տեսական գլխում՝ կոնֆլիկտների վերլուծության հատվածում, անդրադարձ կատարվեր ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնում հրատարակված աշխատություններին:

Նշված դիտողությունները և անճշտությունները բոլորովին չեն նսեմացնում գիտական աշխատանքի արժեքը, որը կատարված է բարձր գիտական մակարդակով, ունի հստակ տեսական և գործնական նշանակություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանրացնելով տեսական և փորձարարական հետազոտությունը՝ կարող ենք եզրակացնել, որ Հմայակ Վահանի Մանուկյանի՝ «Հաշտարարի գործունեության արդյունավետությունը պայմանավորող անձնային և սոցիալ-հոգեբանական գործոնները (քաղաքացիաիրավական վեճերի լուծման համատեքստում)» թեմայով ատենախոսությունը իրենից ներկայացնում է համապարփակ գիտական հետազոտություն և համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման

կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Հմայակ Մանուկյանը, հոգեբանական գիտությունների թեկնածուի հայցվող գիտական աստիճանին՝ ԺԹ.00.03. «Սոցիալական հոգեբանություն» (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն):

ՀՀ պետական կառավարման
հոգեբանության ամբիոնի վարիչ,
հոգեբ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր՝ Ռ. Վ.Աղուզումցյան

Նիստի քարտուղար՝ Լ. Բդոյան

Ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ս. Հ. Պողոսյան